# ԵԱՏՄ-Ն ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Գագիկ Մակարյան**
*Հայաստանի գործարարների հանրապետական միության նախագահ*

Սույն հոդվածում ներկայացված է Հայաստանի տնտեսական իրավիճակը 2016թ-ի և 2017թ-ի սպասվելիք ցուցանիշներով: Միաժամանակ մի քանի ուղղություններով 11 երկրների շրջանակում ներկայացված է տարածաշրջանում տիրող իրավիճակը՝ հատկապես աղքատության, գործազրկության, ՀՆԱ-ի և տնտեսական աճի մասով:

Բացի այդ, առաջին անգամ հոդվածում փորձ է արվել երկրում տիրող իրավիճակի և գործարար միջավայրի տեսանկյունից, հնարավորությունների օգտագործման և առաջացող վտանգների ներքո նախնական ներկայացնել մի մոդել, որը թույլ կտա հաշվարկել գործարար համայնքի կրած վնասները: Այդ վնասների մեծությունը կարող է լինել տարբեր ըստ երկրներում տիրող իրավիճակի՝ պայմանավորված կոռուպցիայով, ստվերային տնտեսությամբ, անհավասար մրցակցությամբ և օլիգարխիկ բիզնեսի առկայությամբ: Միաժամանակ հոդվածում ներկայացվել է ՀՀ արտաքին առևտրի հնարավորությունները ԵՄ և ԵԱՏՄ անդամ երկրների հետ:

**Հիմնաբառեր.** գործարար միջավայր, ԵԱՏՄ, արդար մրցակցություն, կոռուպցիա, տնտեսական աճ, ՀՆԱ, գործազրկություն, աղքատություն, ձեռնարկատիրական մշակույթ, ենթակառուցվածք:

Պաշտոնական տվյալներով 2017 թվականի ընթացքում Եվրագոտում տեղի կունենա ընդհանուր տնտեսական տեմպի նվազում և, տնտեսական աճը 2015 թվականի 4%-ի համենմատ 2016 թվականին կկազամի 1.7%, մինչդեռ 2017թվականին այն կանխատեսվում է 1.5%: Չնայած այն բանին, որ, օրինակ՝ պղնձի գինը միջազգային շուկայում կաճի, այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՀ-ից մետաղների արտահանման շուկայի կառուցվածքը

և ընդհանուր գնողունակության նվազումը ԵՄ երկրներում՝ ՀՀ-ի արտահանման ծավալները դեպի ԵՄ երկրներ կարող են նվազել: Մյուս կողմից արտահանվող մետաղների մի մասը դեպի ԱՄՆ և Կանադա, ԱՄՆ տնտեսական աճի շնորհիվ (2017թվականին 2.2% սպասվելիք) կարող է դրական հավասարակշռություն ստեղծել ԵՄ արտահանման նվազման նկատմամբ:

Մխիթարական է, որ գլոբալ զարգացման տեսանկյունից դիտարկելիս եթե գումարենք ՀՀ հիմնական շուկաների (ԱՄՆ, Չինաստան, ՌԴ, զարգացող շուկաներ, ԵՄ ներառյալ ՀՀ) տնտեսական ցուցանիշները և միջինացնենք տնտեսական աճը, ապա 2015թ. – 1.58%, 2016թ. – 1.69%, 2017թ. – 3.1% է, և ստացվում է, որ 2017-ի ցուցանիշը երկու անգամ կարող է 2015-ին գերազանցել:

Բացի այդ, տրանսֆերտների ծավալը նորից կարող է աճել էականորեն 2017թ. ընթացքում թե ՌԴ-ից և թե ԱՄՆ-ից: Սակայն լավ կլինի, որ այդ աճը տեղի ունենա գերազանցապես ռուբլու տեսքով, իսկ դոլարի քանակը քիչ ավելանա: Հետևաբար ռուբլու քանակը ՀՀ-ում կավելանա, որը կհարկադրի առևտրի լրացուցիչ զարգացում ՌԴ-ի հետ: Ներմուծման մեջ ՌԴ-ն կգերակշռի, իսկ արտահանման ծավալները կավելանան լրացուցիչ՝ մոտ 10%-ի չափով:

ՀՀ-ում աղքատությունը մնում է բարձր: Ներկայումս ՀՀ-ում այն կազմում է 29.8%, Վրաստանում՝ 2 անգամ, Ադրբեջանում՝ 6 անգամ, իսկ Ղազախստանում՝ 4.5 անգամ պակաս: Քանի դեռ այդ ցուցանիշը բարձր է ՀՀ-ում, միգրացիան կշարունակվի: Որպեսզի աղքատությունը ՀՀ-ում գոնե 2 անգամ նվազի, անհրաժեշտ է ապահովել առնվազն մի քանի հնարավորություններ: Դրա համար պետք է՝

1. ստեղծել շուրջ 100 հազ. նոր աշխատատեղեր կամ
2. աղքատ ընտանիքների համար 2017թ. հատկացնել մոտ 350-400 մլն դոլար լրացուցիչ գումար: Դրանք այլընտրանքային կդառնան, եթե տրանսֆերտների ծավալը աճի մոտ 40 %-ով, որից ՌԴ-ի մասը կարող է կազմել մինչև 80%:
3. Խթանել ինքնազբաղվածների թիվը և ընտանեկան բիզնեսը: Եղած գնողունակության պայմաններում կպահանջվի նաև տուրիստների թվի ավելացում առնվազն 300 հազարով, որպեսզի խթանվի ինքնազբաղվածությունը և ընտանեկան բիզնեսը կամ էլ բնակչության գնողունակության աճ տեղի ունենա շուրջ 10%-ով:

Մենք գործ ունենք լուրջ թվերի հետ. եղած տարբերակներում ամենահեշտը տրանսֆերտների տարբերակն է՝ կախված ՌԴ-ի վիճակից: Ըստ մեզ, պետք է խթանել նաև մյուս բաղադրիչները՝ ապագայում կայուն սոցիալ-տնտեսական իրավիճակ ստեղծելու համար:

Գործազրկության մակարդակը հատկապես բարձր է մնում երիտասարդության շրջանում: Շատ երիտասարդներ (մոտ 44.5%-ը) հարցումների ժամանակ նշում են, որ իրենց ընտանիքի գումարը բավականացնում է գնելու միայն սնունդ ու հագուստ, բայց բավարար չէ ավելի մեծ (օրինակ՝ հեռուս-

տացույց, սառնարան, կենցաղային իրեր և այլն) գնումներ կատարելու համար, իսկ 5.8%-ը նշում է, որ գումարը հերիքում է միայն սնունդ գնելու համար: Այսպիսով, երիտասարդների շուրջ 53%-ը էականորեն ֆինանսական միջոցնեչով ապահովված չէր անհրաժեշտ գնումներ կատարելու և ապրելու համար:

Բացի դրանից երիտասարդներին աշխատաշուկայում ինտեգրելու համար կարևոր գործիք է նվազագույն աշխատավարձը: Ներկայումս նվազագույն աշխատավարձի դեպքում տնտեսական էլեմենտները հաշվի չեն առնվում: Օրինակ՝ աշխատուժի արտադրողականություն, հմտություններ, աշխատաշուկայի իրավիճակ: Գերակշռում է միայն սոցիալական էլեմենտը, այն է՝ նվազագույն զամբյուղին մոտեցնելը և դրանով աղքատության կրճատումը: Նվազագույն աշխատավարձը դիվերսիֆիկացված չէ ըստ աշխատողների փորձառության կամ հմտությունների:

Զբաղվածության քաղաքականության վրա սոցիալական և տնտեսական գործոնների ազդեցությունը կարևոր է հաշվարկման մեխանիզմը ճիշտ ընտրելու համար պահանջարկի իմաստով մարդկային ռեսուրսների նկատմամբ աշխատատեղերի ստեղծման, գործազրկության հանդեպ պաշտպանվածության, զբաղվածության խթանման, կեցության ծառայությունների, տարածաշրջանային ու օտարերկրյա զբաղվածության տեսանկյուններից:

Այդ առումով ՀՀ-ի պարագայում ավելի զգայուն խնդիր է երիտասարդության զբաղվածությունը: Աշխատաշուկայի բազմակողմանի վերլուծությունը երիտասարդության զբաղվածության առումով խիստ անհրաժեշտ է ճիշտ և հիմնավորված քաղաքականություն մշակելու համար, օրինակ՝ ինչպիսի տվյալներ են անհրաժեշտ, ինչպես դրանք պետք է վերլուծվեն նաև ՀՀ տնտեսության 11 գերակա ոլորտների տեսանկյունից: Այս առումով ազգային վիճակագրության հավաստի տվյալների առկայությունը պետք է լինի երաշխավորված:

ՀՀ Կառավարությունը ներկայումս փորձում է զարգացնել տուրիզմը, խթանել տեղական արտադրությունները և ինքնազբաղվածությունը: Ներմուծվող որոշ ապրանքախմբեր տեղականով փոխարինելը ռազմավարական մոտեցում է: Համատեղ հավաքման արտադրությունների խթանումը նույնպես էականորեն կարող է ՀՀ-ում բարձրացնել ձեռնարկատիրական մշակույթը և բարելավել աշխատուժի որակը, խթանել կրթություն-աշխատաշուկա կապը, որոնք կարևոր են ձեռնարկությունների կայուն զարգացման համար:

Վերջին հաշվով կառավարությունները ընդհանրապես պետք է ոչ միայն հետաքրքրված լինեն միայն լսելու գոյություն ունեցող խնդիրների մասին, այլ նաև՝ գտնելու սոցիալապես, տնտեսապես, քաղաքականապես ընդունելի առաջարկներ, որոնք էական կլինեն որոշումների կայացման համար: ՀԳՀՄ բազմակողմանի հետազոտություններն ու զեկույցները վկայում են, որ զարգացած տնտեսությունը կարող է որոշիչ լինել ՀՀ կայունության և բարգավաճման, ինչպես նաև մարդկանց բարեկեցության համար: Չկա լավ տնտեսություն առանց լավ բիզնեսի և չկա լավ գործա-

բարություն առանց բարենպաստ բիզնես, միջավայրի, որը պետք է հնարավոր դարձնի բիզնեսի աճը և բարգավաճումը՝ նոր արժեքներ ստեղծելու և ավելի շատ մարդկանց աշխատանքում ընդգրկելու համար: ՀՀ-ում բիզնես միջավայրը առնչվում է մի շարք խոչընդոտների հետ, որոնք, ըստ ՀԳՀՄ նշված հետազոտությունների, արտահայտվում են հետևյալ հիմնական բնագավառներում

- լավ կառավարման և կոռուպցիայի,
- կրթության (ուսուցման) և ցկյանս ուսումնառության,
- նպաստավոր իրավական և կանոնակարգող միջավայրի,
- ֆինանսական ծառայությունների մատչելիության,
- արդար մրցակցության,
- առևտուր և կայուն տնտեսական ինտեգրման,
- ենթակառուցվածքների (հատկապես էներգետիկ ոլորտի վրա կենտրոնացմամբ):

ՀՀ-ում դեռևս բարձր մակարդակ ունի ստվերային տնտեսությունը, հետևաբար ստվերի դեմ պայքարը պետք է կազմակերպել զգուշորեն: Բիզնեսի մի մասը գոյատևում է ստվերային տնտեսության շնորհիվ: Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է ուղեկցել տնտեսական զարգացման համար անհրաժեշտ գործարար միջավայրի բարելավման միջոցով: Հակառակ դեպքում ստվերային տնտեսության կրճատումը կառաջացնի էական անոմալիաներ և սոցիալական լրացուցիչ լարվածություն: Ներկայումս սոցիալական վատ վիճակի և առկա խնդիրների վեկտորը հակառակ է ուղղված տնտեսության զարգացմանը: Որոշակի հավասարակշռված վիճակ է ձևավորվել ստվերային տնտեսության ու սոցիալական խնդիրների միջև, և այդ դրությունից պետք է դուրս գալ խելամիտ քայլերով:

Այլ է ԵԱՏՄ-ի վերաբերյալ: Երկու տարվա ընթացքում դեռևս ՀՀ-ին չհաջողվեց փոխել առևտրային բալանսը անդամ երկրների հետ, մինչև մեր միանալը: 2013 թ. ՀՀ-ի հիմնական առևտրային գործընկերներն էին ԵՄ երկրները միասին վերցրած և 2-րդ տեղում ՌԴ-ը՝ մոտ 24% ՀՀ-ի հետ արտաքին առևտրի ծավալով: Իսկ Բելառուսը ՀՀ արտաքին առևտրի երկրների շարքում գտնվում էր 18-րդ տեղում՝ կազմելով արտաքին առևտրի 0.9%-ը, Ղազախստանը՝ 26-րդ տեղում 0.02%-ով), և միանալուց հետո էական տարբերություններ չառաջացան: Պատճառներից մեկը այն էր, որ ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից ներմուծման սակագների դրույքաչափերի աճի հետևանքով տեղական արտադրությունները խթանելու հնարավորությունները ՀՀ-ի կողմից չօգտագործվեցին: Մյուս կողմից ՀՀ-ն նույն կերպ կարող էր ԵԱՏՄ երկրների համար դառնալ 3-րդ երկրից ներմուծումը փոխարինող երկիր:

Սարքերը և ճարտարագիտական արտադրանքները (մասեր, ժամացույցի կաղապարներ, օպտիկական գերճշգրիտ սարքեր, օպտիկական մասեր և այլն) ՀՀ-ի համար ունեն մեծ հեռանկար:

Արտահանման մյուս խումբը ներառում է մանածագործություն, ձկան արտադրանք, բանջարեղեն, ոսկերչական ապրանքներ և քարից, գիպսից,

ապակուց ապրանքներ: Այս բոլորը միասին կազմում են ՀՀ արտահանման 10%-ը:

Արտահանման որոշ պոտենցիալ ունի հայկական պանիրը, սակայն ընկերությունները համախմբված չեն. պանրի որակի լավացման և քանակի ավելացման կարիք կա: Բացի այդ, դրանք պետք է սերտիֆիկացվեն սննդի անվտանգության միջազգային պահանջների HACCP կամ ISO 22000 ստանդարտների համաձայն:

Էական պոտենցիալ կա ներմուծումը փոխարինելու տեղական արտադրանքով: Օրինակ՝ նախնական հաշվարկներով այս ծավալով հնարավոր է կատարել համալրում մոտ 220 մլն դոլարի, որից

| | |
|---|---|
| Թռչնի միս | 40-45 մլն դոլարի |
| Սպիրտային խմիչքներ, լիկյորներ | 35 մլն դոլարի |
| Ծխախոտ | 43 մլն դոլարի |
| Դեղորայք | 80-85մլն դոլարի |
| Կահույք և դրա մասեր | 20 մլն դոլարի |
| Ընդամենը մոտ | 220 մլն դոլարի չափով: |

Կարելի է առաջին փուլում առնվազն փոխարինել 100 մլն դոլարը տեղականով, հատկապես թռչնամսի, ծխախոտի, կահույքի և սպիրտային խմիչքների մասով: Երկրորդ փուլում՝ նաև դեղորայքի որոշ տեսակներ շուրջ 10 մլն դոլարի չափով: Այսպիսով, երկու փուլով 3 տարվա ընթացքում 220 մլն դոլար ներմուծումից արդեն առնվազն 110 մլն դոլար հնարավոր է արտադրել (մոտ 50%) ՀՀ-ում: Զբոսաշրջության ծառայության շուկան ՀՀ-ում կազմում է մոտ 1 մլրդ դոլար, որովհետև ավելի քան 1.2 մլն մարդ է ժամանել այդ նպատակով ՀՀ: Մեծ պոտենցիալ կա ՌԴ-ից դեպի ՀՀ տուրիզմը առավել խթանելու առումով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության (ՏՀՏ) ոլորտը մոտ 200 մլն դոլար արտահանման ծավալ ունի, որից մոտ 80% բաժին է ընկնում ԱՄՆ-ին և Հյուսիսային Ամերիկայի մյուս երկրներին, իսկ 10%-ը՝ Եվրոպային, միայն մոտ 8%՝ ՌԴ-ին, սակայն ԵԱՏՄ-ում ՀՀ-ի համար առկա է ուժեղ մրցակցություն (ղազախական, ռուսական, վրացական)մասնագիտական խմբերի կողմից: Այս ոլորտը կարող է զարգանալ հենց ներսում, հայկական ընկերությունների շնորհիվ, այն է՝ տնտեսական զարգացմանը զուգահեռ խթանել հայկական ընկերությունների արդիականացումը էլեկտրոնային հաշվետվությունների և էլեկտրոնային առևտրի զարգացման միջոցով, բացի այդ՝ լավացնելով PR մարկետինգային գործընթացները SS գործիքներով:

ՀՀ-ի համար արտահանման նոր տարածքներ կարող են հանդիսանալ ԵԱՏՄ մյուս երկրները, Իրանը, Արաբական և Հարավարևելյան Ասիայի երկրները, Չինաստանը և այլն:

ՀՀ-ն կարող է կամուրջ դառնալ ԵԱՏՄ և ԵՄ երկրների միջև, ինչպես նաև վերածվել խելամիտ/սմարթ տարածքի:

ՀՀ պաշտպանության նախարարությունը կարող է որպես ընդդիմախոս հանդես գալ ռազմական արդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների զարգացման համար: Իր տեխնիկական բնույթի խորհուրդներով, փակ տեղեկությունների տրամադրման շնորհիվ և իր պոլիգոններում ուսումնական պարապմունքների շրջանակում փորձարկի ստեղծված և նախագծված արտադրական նմուշները: Դա հնարավորություններ կտա հայկական ընկերություններին SS, հեռահաղորդակցման, ճարտարագիտության, օպտիկայի և սարքաշինության ու էլեկտրոնիկայի ոլորտներում իրենց նախագծային, կոնստրուկտորական և փորձնական քանակների արտադրության գործընթացները էականորեն բարելավել, կրճատել նախագիծ-փորձնական նմուշ-վերջնական արտադրանք շղթայում ծախսվող ժամանակը, ինչպես նաև բարձրացնել այլ երկրների հետ պատվերների կատարման հավանականությունը, մեծացնել արտահանման ծավալները՝ բավարարելով սպառողների պահանջները:

Դիտարկենք տարածաշրջանային մի քանի զարգացած երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ համեմատական տվյալները 2016 թվականին:[1]

| Երկրի անվանումը | ՀՆԱ մլրդ ԱՄՆ դոլար | Գործա-զրկություն % | Աղքա-տություն % | Մեկ շնչին ընկնող ՀՆԱ ԱՄՆ դոլար | Տնտեսական աճ |
|---|---|---|---|---|---|
| ԱՄՆ | 18500 | 4.9 | 13.5 | 57300 | 1.6 |
| Չինաստան | 11400 | 4.02 | 4.1 | 21606 | 6.7 |
| Գերմանիա | 3500 | 4.6 | 4.2 | 41895 | 1.9 |
| ՌԴ | 1267 | 5.4 | 12.8 | 7742 | -0.41 |
| Դանիա | 302.5 | 4.6 | 9.5 | 53243 | 1 |
| Թուրքիա | 735.7 | 11.8 | 11.2 | 8562 | -2.7 |
| Իրան | 412.3 | 11.29 | 9.8 | 4798 | 4.5 |
| Ղազախստան | 128.1 | 5 | 4.9 | 6471 | 1 |
| Ադրբեջան[1] | 53 | 5.3 | 5 | 3701 | 1.1 |
| Վրաստան | 13.9 | 12 | 15 | 3790 | 2.2 |
| Հայաստան | 10.5 | 18 | 29.8 | 3602 | 0.5 |

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսական զարգացման իրական մոդելը գալիք տարիների համար պետք է գլխավորապես ուղղված լինի այնպիսի ծրագրերի իրականացմանը և այնպիսի ռազմավարական կարևոր ոլորտների զարգացմանը, որոնք ներկայումս արդեն կոռուպցիայի դեմ սկսված պայքարի և ստվերային տնտեսության կրճատման գործընթացներին զուգահեռ խիստ նկատելի ցուցանիշներով ՀՀ-ում կնվազեցնեն աղքատության և գործազրկության մակարդակը, այն էլ հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Այդ նպատակով անհրաժեշտ է էականորեն վերանայել նախկինում ՀՀ կառավարության կողմից

1 Doing Business report 2017 World Bank, ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն. պաշտոնական կայք http://www.armstat.am/am/?nid=57

հաստատված ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը մինչև 2025 թվականի համար՝ ներառելով ավելի գործնական հաշվարկների վրա հիմնված զարգացման ուղղություններ:

Անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել ներքին փոքր շուկայով պայմանավորված խնդիրներին, այն է՝ բնակչության փոքր թվաքանակը և մեր պետության տնտեսա-աշխարհագրական դիրքը: Հետևաբար ներքին շուկայի սահմանափակության հարցը կարիք ունի լուրջ կարգավորման, որի լուծումներից ավելի արդյունավետ կարող են հանդիսանալ հետևյալ երկուսը

1. Իրական տուրիզմի զարգացումը և հնարավորինս տուրիստական մեծաքանակ խմբերի ընդունումը, որոնց թվաքանակի և գնողունակության շնորհիվ զգալիորեն կաճեն ներքին շրջանառվող ֆինանսները, կմեծանան տարբեր ապրանքներով և ծառայություններով պայմանավորված վաճառքները:
2. Արտահանման խթանումը, որի արդյունքում ներքին շուկային կգումարվեն արտաքին ընդարձակ շուկաները և գումարային առումով վաճառքի ծավալները կտրուկ կաճեն: Հետևաբար պետք է նվազեցնել արտահանմանը սահմանափակող գործոնների ազդեցությունը: Այդպիսի գործոններից են, օրինակ, արտահանման փոքր ծավալները, տրանսպորտային խրթինությունները և որոշ մաքսային կետերում բացթողնման նվազ հնարավորությունները: Դեռևս քիչ են առևտրային լոգիստիկա կազմակերպող մասնագիտացված կառույցները:

Ներքին և առավելապես արտաքին շուկայում տեղական արտադրությունները օժտված չեն անհրաժեշտ մրցունակությամբ: Գործարարների մտածելակերպում հաճախ գերիշխող են կարճաժամկետ ծրագրերը և առևտրականի հոգեբանությունը՝ պայմանավորված գործարար միջավայրում առկա անհավասար մրցակցության, կոռուպցիայի և բարձր ստվերայնության պատճառով: Երկարաժամկետ հատվածում չգոյատևելու վտանգի մշտական առկայության հոգեբանության պատճառով նրանք հեռահար և արտահանման զարգացման ռազմավարական ծրագրեր չեն մշակում և հազվադեպ են կիրառում: Դրա հետևանքով ընկերությունների մեծ մասը շահագրգռված չէ անգամ դիտարկելու իր ուժեղ և թույլ կողմերի հիման վրա շրջակա միջավայրում առկա հնարավորությունների օգտագործումը՝ իր առկա ուժեղ կողմերը էլ ավելի ուժեղացնելու համար կամ թույլ կողմերն ավելի թուլացնելու եղած հնարավորությունների շրջանակում: Բացի այդ նույն կերպ չեն դիտարկվում առկա վտանգների հաղթահարման հնարավորությունները՝ համաձայն SWOT վերլուծության: Ըստ SWOT մեթոդաբանության՝ S (strenghts) և W (weaknesses) ուժեղ և թույլ կողմերը վերաբերվում են ընկերությանը, և դրանք պայմանավորված են իր ներքին խնդիրներով, մինչդեռ հաջորդ O (opportunities)- հնարավորությունները և T (threats)-վտանգները առնչվում են շրջակա միջավայրին կամ գործարար

միջավայրին, որտեղ իր գործունեությունը ծավալում է տվյալ ընկերությունը:

Հայկական ընկերություններն իրենց գործունեության գերակշռող մասն իրականացնում են ՀՀ տարածքում, հետևաբար այդ միջավայրում առկա խնդիրները բացասական են ազդում դրանց գործունեության վրա: Այդ միջավայրի որակը (այսինքն այն թե որքանով է գործարար միջավայրը բարենպաստ գործարարության համար) պայմանավորված է հավասար մրցակցային պայմաններով, ստվերային տնտեսության և կոռուպցիայի մակարդակով, որոնք դեռևս բավականին բարձր տոկոս են կազմում ՀՀ-ում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ կառավարությունը և համապատասխան պետական մարմինները տարիներ շարունակ ոչ բարենպաստ գործարար միջավայր են ապահովել, որովհետև ռեֆորմները հաջողությամբ չեն իրականացվել, ապա այդպիսի միջավայրում գործունեություն ծավալող ընկերությունները չեն կարողացել իրացնել իրենց հնարավորություններն արդյունավետ բիզնես ծավալելու տեսանկյունից, հետևաբար ուժեղ կողմերը վատ են օգտագործվել և չեն ուժգնացվել: Բացի այդ միջավայրում վտանգներ (T) են առաջացել կամ դրանք չեն վերացվել, այսինքն գործատուները տարիների ընթացքում կորցրել են արդյունավետ գործելու հնարավորությունները, և սպասվելիք արդյունքները չեն ստացվել, հետևաբար տարիների ընթացքում աստիճանաբար կորցրել են իրենց եկամուտները, նվազել է շահութաբերությունը: Վերջին հաշվով ընկերությունների մի մասը դադարել է գործել:

Տեղի է ունեցել բիզնեսի զգալի սննանկացում: Դրա արդյունքում եկամուտների մի զգալի մասը կուտակվել է փոքր թվով մարդկանց ձեռքում: Այս ամենի արդյունքում խիստ դանդաղել է տնտեսական աճը, որի պատճառով ավելացել է գործազրկությունը և աղքատությունը, ուժգնացել է աշխատանքային միգրացիան և ընդհանրապես ՀՀ քաղաքացիների էմիգրացիան դեպի այլ երկրներ: Դրանց արդյունքում նվազել է բնակչության գնողունակությունը և պակասել է սպառողների ընդհանուր թիվը, սա էլ իր հերթին հանգեցրել է ընկերությունների վաճառքի ծավալների կրճատմանը և հետևաբար կայուն եկամուտների նվազմանը: Այսպիսով, գլոբալ առումով անարդյունավետ կառավարման հետևանքով կարելի է եզրակացնել, որ տարիների ընթացքում թույլ կառավարության պատճառով բիզնեսը էականորեն կրել է վնասներ, և, չնայած բարդությանը, կարելի է հաշվարկել կորուստների մոտավոր չափը: Հետևաբար ներկայում և ապագայում կառավարության կարևոր խնդիրներից է արագ և հաստատուն քայլերով բարելավել գործարար միջավայրը, կիրառել համանման մեխանիզմներ և նաև ձևավորել բիզնեսի վնասները կոմպենսացնելու մեխանիզմներ, այդ թվում՝ տարբեր արտոնությունների և սուբսիդիաների տրամադրման միջոցով: Միայն տարիների ընթացքում բիզնեսին պատճառված վնասների գիտակցման և ճանաչման դեպքում կարելի է հույս ունենալ, որ 2017թ. ապրիլի ԱԺ ընտրություններից հետո ձևավորվող կառավարությունը ի վիճակի կլինի համարձակ քայլերով կատարել անհրաժեշտ բարեփոխումներ:

# ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЕАЭС И РА

**Гагик Макарян**
*Президент Республиканского Союза Работодателей Армении*

В статье представлена экономическая ситуация в Армении за 2016 год и показатели ожидаемых результатов на 2017 год. Одновременно представлена ситуация в регионе в рамках 11–и стран по нескольким направлениям, особенно, по показателям бедности, безработицы, ВВП и экономического роста. Кроме того, впервые была попытка представить предварительную модель подсчета убытков представителей бизнес –сообщества с использованием возможностей и возникающих угроз с точки зрения ситуации и бизнес–среды в стране. Сумма убытков может быть разной в зависимости от ситуации в стране, обусловленная коррупцией, неформальной экономикой, неравной конкуренцией и наличием олигархии. Одновременно в статье представлены внешнеторговые возможности Армении со странами ЕС и ЕВРАЗЭС.

**Ключевые слова:** бизнес–среда, ЕВРАЗЭС, равная/неравная конкуренция, коррупция, экономический рост, ВВП, безработица, бедность, предпринимательская культура, инфраструктура.

# ECONOMIC DEVELOPMENT ISSUES IN EAEUAND RA

**Gagik Makaryan**
*President of Republican Union of Employers of Armenia*

The article presents analysis of economic situation in Armenia for 2016 and the indicators of expected results for 2017. At the same time, the situation in the region in terms of poverty, unemployment, GDP and economic growth in the framework of 11 countries is presented. Besides, for the first time there was an attempt to present a preliminary model for calculating the loss of business community using opportunities and emerging threats in terms of the situation and the business environment in the country. The amount of losses may vary depending on the situation in the country, due to corruption, the informal economy, unequal competition and the presence of the oligarchy. At the same time, the article presents the foreign trade opportunities of Armenia with the EU and EEU countries.

**Key words:** Business environment, EEU, equal/unequal competition, corruption, economic growth, GDP, unemployment, poverty, entrepreneurial culture, infrastructure.